

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածում՝

1) 5-րդ կետը «ապահովագրական ընկերությունները,» բառերից հետո լրացնել «վճարահաշվարկային կազմակերպությունները,» բառերով.

2) 5.1-8-րդ կետերը «ապահովագրական ընկերությունների,» բառերից հետո լրացնել «վճարահաշվարկային կազմակերպությունների,» բառերով.

3) հոդվածը լրացնել 8.1-րդ և 8.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«8.1. վճարահաշվարկային կազմակերպությունների	բազային տուրքի
ներկայացուցչությունները գրանցելու համար	հնգապատիկի չափով
8.2. իրավաբանական անձանց կամ անհատ	
ձեռնարկատերերին՝ որպես ապահովագրական	բազային տուրքի
գործակալ գրանցելու համար	քսանապատիկի չափով»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերությունը «տալու համար» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ վերալիցենզավորելիս)» բառերով.

2) 3.1-րդ և 3.2-րդ կետերը «արտարժույթի» բառից առաջ լրացնել «յուրաքանչյուր վայրում» բառերով.

3) 3.3-րդ կետը «արժույթի» բառից առաջ լրացնել «յուրաքանչյուր վայրում» բառերով.

4) 5.2-րդ կետը «գրավատների» բառից առաջ լրացնել «յուրաքանչյուր վայրում» բառերով.

5) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.4-4.6-րդ կետերով.

«4.4. ներդրումային ֆոնդի կառավարման	տարեկան բազային
գործունեության իրականացման համար	տուրքի 100-ապատիկի
	չափով

4.5. պարտադիր կենսաթոշակային ֆոնդի	տարեկան բազային
կառավարման գործունեության	տուրքի 200-ապատիկի
իրականացման համար	չափով

4.6. կամավոր կենսաթոշակային ֆոնդի	տարեկան բազային
կառավարման գործունեության	տուրքի 150-ապատիկի
իրականացման համար	չափով».

6) ուժը կորցրած ճանաչել 5.3-րդ կետը:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածում՝

- 1) 8.1-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝  
 «8.1. Կենտրոնական բանկի կողմից մասնագիտական բազային տուրքի  
 գիտելիքների թեստավորման համար, իսկ 10-ապատիկի չափով»».
- Կենտրոնական բանկի կողմից մասնագիտական  
 գիտելիքների թեստավորման անցկացումը այլ  
 կազմակերպությանը հանձնելու դեպքում՝  
 Կենտրոնական բանկի կողմից մասնագիտական  
 գիտելիքների թեստավորման արդյունքները  
 հավաստող վկայական տրամադրելու համար
- 2) հոդվածը լրացնել 8.2-րդ և 8.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ՝  
 «8.2. «Ֆինանսական կազմակերպությունների բազային տուրքի  
 լիցենզավորման, վերահսկողության և լուծարման 20-ապատիկի չափով  
 մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
 համաձայն՝ համապատասխան ռեժիմով  
 լիցենզավորվող ֆինանսական կազմակերպությունում  
 աշխատելուն չառարկելու մասին նամակ  
 տրամադրելու համար
- 8.3. Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող բազային տուրքի  
 անձի կանոնադրական կապիտալում 100-ապատիկի չափով»:
- համապատասխան չափով մասնակցությանը  
 չառարկելու մասին նամակ տրամադրելու համար

Հոդված 4. Օրենքի 22-րդ հոդվածի «ի» կետը «Բանկերի» բառից հետո լրացնել «,  
 վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային  
 ֆոնդի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների և  
 ապահովագրական ընկերությունների» բառերով:

Հոդված 5. Օրենքի 34-րդ հոդվածի երրորդ պարբերությունը «լիցենզիաների»  
 բառից հետո լրացնել «, լիցենզիայի ներդիրների» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման  
 պահից վեց ամսվա ընթացքում: